# ՄՏՔԵՐ ԵՒ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Մարդկային պայմանական օրէնքները որքան աւելի մօտ են բնական օրէնքներին՝ նոյնքան էլ աւելի տանելի է կեանքը։

*Վօլտէր.*

—

Այն մարդը, որ յաճախ ենթակայ է իւր այլ և այլ քմահաճոյքին՝ կին պէտք է ծնուած լինէր աշխարհիս վերայ։

*Դիոգինէս.*

—

Ամենքը խօսում են. չը կայ մէկը որ լսէ թէ ինչ է ասում միւսը։

*Վիկտոր-Հիւգօ.*

—

Արդեօք կա՞յ աշխարհիս վրա՛յ մի բան որ վճռուի, վերջանայ, պրծնի գնայ երբ և իցէ. արդեօք հէնց բոլորը վերսկսուելու չէ՞ միշտ։

*Սէնդ—Բէով.*

—

Վիճել կարելի է համակարծիք մարդկանց հետ միայն, և այն էլ վիճելի առարկայի նրբութիւնների մասին։

*Վալտուր.*

—

Մարդկանց լաւ ճանաչելու և դատելու համար պէտք է որ խառնակութեան ժամանակ ապրես նրանց հետ։

*Տ. Դը. Ստալ.*

—

Մեր արատների պատճառած վէրքերը թէև ժամանակով բժշկւում են, սակայն նրանց սպիները մնում են յաւիտեան։

*Վալտուր.*

—

Պատուաւոր մարդը կը խոստովանի երբեմն երբ սխալ գործէ, իսկ ստահակը երբէք։

*Վ. Թակըրէ.*

—

Ոճը մտքի խանձարուրն է։

*Սենտ—Բէօվ.*

—

Չափէն մինք քաշեցինք, սափէն եադիրը։

*Սայաթ—Նօվա.*

—

Աշխարհս թէկուզ քոնն ըլի, ինչ պիտի տանիս։

*Նոյն.*

—

Աշխարհս ումն է մնացի, որ ինձ ու քիզ մնայ։

*Նոյն.*

—

Շահն էր քաշի՝ չէր դիմանայ էս իմ քաշած զիանին։

*Նոյն.*

—

Հէքիմ ու դատաստան չը կայ, մէկ դրուստ աղալաթ չը կայ։

*Նոյն.*

Տպագրաբաղեց Ն. ՑԱՐՈՑ